



«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Մամլո հաղորդագրություն

09 սեպտեմբերի, 2010, Երևան

Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 98-րդն է աշխարհի 139 երկրների մեջ

Համաշխարհային մրցունակության զեկույցը իր վերլուծություններն ամփոփում էլ համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Վերջինս մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից: ՀԱՄ ցուցիչը, հաշվարկվելով մրցունակության 12 հեմասյունների հիման վրա, երկրների մրցունակության ամփոփ գնահատական է տալիս:

Վարկանիշերի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների հարցումը տարեկան կտրվածքով իրականացվում է ՄՀԶ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ-ի և Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկույց 2010/11»-ի հիմնական արդյունքները:

ՀՄԶ-ն գնահատում է 139 երկրների տնտեսությունները: 2010/11 զեկույցի արդյունքներով Շվեյցարիան, ինչպես և Նախորդ տարի, այս տարի ևս առաջին տեղն է գրավում իր մրցունակությամբ: Շվեդիան բարելավել է իր դիրքը՝ չորրորդ տեղից հասնելով երկրորդի: Սինգապուրը, ԱՄՆ և Գերմանիան եզրափակում են երկրների լավագույն հնգյակը:

Մրցունակության համատեքստում Հայաստանը 2010թ.-ին իր դասակարգմամբ կրկին վերադարձել է զարգացման անցումային փուլ, որը գտնվում է ռեսուրսների վրա հիմնված փուլի և արդյունավետության վրա հիմնված փուլի միջակայքում:

ԱՊՀ տարածաշրջանի երկրների մրցունակության փոփոխությունները ներկայացված են ստորև: Ըստ միավորի մրցունակության բացասական տեղաշարժ է արձանագրվել միայն Ադրբեյջանում և Ուկրաինայում, մինչդեռ Տաջիկստանն ու Ղրղզստանը զգալիորեն բարելավել են իրենց մրցունակության դիրքը: Ադրբեյջանի մրցունակության գնահատականի անկումը հիմնականում պայմանավորված է ինստիտուտների, ենթակառուցվածքի, ապրանքների շուկաների արդյունավետության և նորարարության համաթվերի վատթարացմամբ:



	2010 վարկանիշ	Վարկանիշի փոփոխություն 10/09, միավոր (2010թ. երկրների շարքում)	Վարկանիշի փոփոխություն 10/09, միավոր (2009թ. երկրների շարքում)	2010 միավոր	Միավորի փոփոխություն 10/09, %
Հայաստան	98	-1	+3	3.76	+1.35%
Ադրբեջան	57	-6	-6	4.29	-0.23%
Վրաստան	93	-3	0	3.86	+1.31%
Ղազախստան	72	-5	-4	4.12	+0.98%
Ղրղզստան	121	+2	+7	3.49	+3.87%
Ռուսաստան	63	0	0	4.24	+2.17%
Տաջիկստան	116	+6	+10	3.53	+4.44%
Ուկրաինա	89	-7	-5	3.90	-1.27%

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից թողարկվող 2010-2011թթ. Համաշխարհային մրցունակության զեկույցում (ՀՄԶ) Հայաստանը 139 երկրների մեջ գրավում է 98-րդ տեղը՝ (նախորդ ցուցանիշը՝ 97-րդ տեղը 133 երկրների շարքում): ՀՄԶ 2009 երկրների շարքում (133) Հայաստանը վարկանիշով 94-րդն է՝ 2008-ի համեմատ բարելավելով իր վարկանիշը 3 կետային դիրքով: Զգալի դրական տեղաշարժ է գրանցվել առողջապահության, տարրական և բարձրագույն կրթության ոլորտներում: Մինչև ժամանակ էական հետընթաց է արձանագրվել երկրի մակրոտնտեսական կայունության համաթվով՝ պայմանավորված պետական բյուջեի հաշվեկշռի, պետական պարտքի և տոկոսադրույքների սպրեդի բացասական զարգացումներով:

Հայաստանի մրցունակության հենասյուների փոփոխությունները

Հենասյուներ	2010 վարկանիշ	Վարկանիշի փոփոխություն 10/09, միավոր (2010թ. երկրների շարքում)	2010 միավոր	Միավորի փոփոխություն 10/11, %
Ինստիտուտներ	97	-2	3.50	+0.27%
Ենթակառուցվածքներ	90	-9	3.46	+6.46%
Մակրոտնտեսական կայունություն	99	-46	4.23	-11.51%
Առողջապահություն և տարրական կրթություն	93	+3	5.37	+7.40%
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	91	+5	3.66	+5.78%
Ապրանքների շուկայի արդյունավետություն	113	+3	3.72	+1.92%
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	47	0	4.61	0%
Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն	110	-13	3.60	-5.01%
Տեխնոլոգիական պատրաստվածություն	108	-3	2.96	+3.50%
Շուկայի չափ	116	-7	2.50	-7.06%
Գործարարության կատարելագործվածությունը	109	+3	3.33	-0.60%
Նորարարություն	116	-8	2.63	-2.95%

Հայաստանի հիմնական մրցակցային առավելություններն են աշխատանքից հեռացման հետ կապված ծախսերի ցածր մակարդակը, աշխատանքի շուկայի արդյունավետ կարգավորումը, բիզնես հիմնելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը, ինչպես նաև մալարիայի, հանցագործությունների և ահաբեկչության ազդեցության ցածր մակարդակը բիզնեսի վրա: Ամենաեական թերությունների շարքին են դասվել մրցակցային այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը, շուկայում գերիշխող խմբերի առկայությունը և մրցակցության անկատար մակարդակը, ինչպես նաև կապիտալի շուկայի անարդյունավետ գործունեությունը, ինչպես օրինակ՝ բաժնեմասային և վենչուրային կապիտալի միջոցով ֆինանսավորման հասանելիությունը:

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

	Ուշագրավ առավելություններ	Վարկանիշ	Ուշագրավ թերություններ	Վարկանիշ
1.	Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա	1	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	138
2.	Մալարիայի դեպքերի քանակը	1	Տեղական մրցակցության ինտենսիվություն	136
3.	Աշխատանքից հեռացման հետ կապված ծախսեր	21	Տեխնոլոգիական ապրանքների պետական գնումների քաղաքականություն	134
4.	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի ազդեցությունը գործարարության վրա	22	Շուկայում գերիշխող խմբերի առկայություն	133
5.	Հանցագործությունների և բռնության հետևանքով գործարարության ծախսերը	31	Բաժնեմասային ֆինանսավորման տեղական աղբյուրների առկայություն	131
6.	Ահաբեկչության հետևանքով գործարարությանը հասցվող վնասը	32	Վենչուրային կապիտալի մատչելիություն	131
7.	Աշխատանքից ազատելու գործելակերպեր	33	Փոքր բաժնեմասով բաժնետերերի շահերի պաշտպանություն	131
8.	Բիզնես հիմնելու համար անհրաժեշտ գործընթացների թիվը	34	Ընկերությունների խորհուրդների գործունեության արդյունավետություն	130
9.	Սաքսադրույքներ	35	Կառավարման դպրոցների որակ	130
10.	Մրցակցային առավելության տեսակը	39	Արտաքին շուկաների չափ	129

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական թևն է: «Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է մրցունակության և նորարարության հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

Երևան 0051, Դոկտեի Էմին123
 Դեռ. +37410 219740
 Էլ-փոստ. info@ev.am
www.ev.am